

Այց Տավուշի մարզի Բերդ համայնքի Չինարի գյուղ

Տավուշի մարզի Բերդ համայնքի Չինարի գյուղի գրադարանը 2017թ. դեկտեմբերին ամբողջովին հրդեհվել էր: Չինարի համայնքի վարչական տարածքի ղեկավար Սամվել Սադոյանը դիմում-խնդրանք է հղել Հայաստանի ազգային գրադարանի տնօրենին՝ աջակցելու նոր գրադարանի ստեղծմանը և համալրմանը:

Հայաստանյան հրատարակչությունները և գրախանութները մարդասիրական և բարեգործական ջերմ արձագանքով իրենց լավագույն հրատարակչությունները տրամադրեցին Չինարիի նորաստեղծ գրադարանին:

Սամվել Սադոյանի դիմում-խնդրանքին արձագանքեցին «Զանգակ» (տնօրեն՝ Սոկրատ Մկրտչյան), «ՎՄՎ պրինտ» (տնօրեն՝ Վահրամ Մնացականյան), «Հայագիտակ» (տնօրեն՝ Ալբերտ Իսոյան), «Հայաստան» (տնօրեն՝ Վահագն Սարգսյան), «Արեգ» (տնօրեն՝ Սամվել Գասպարյան), «Անտարես» (տնօրեն՝ Արմեն Մարտիրոսյան), «Արաքս» (տնօրեն՝ Հովսեփ Խուրշուդյան), «Վան Արյան» (տնօրեն՝ Վիլյամ Պողոսյան), «Լուսաբաց» (տնօրեն՝ Վիտայի Ասլանյան), «Արևիկ» (տնօրեն՝ Սաբեթ Հովհաննիսյան), «Էդիթ Պրինտ» (տնօրեն՝ Մկրտիչ Կարապետյան), «Հայրապետ» (տնօրեն՝ Սարգիս Թումանյան) հրատարակչությունները, ինչպես նաև «Բուկինիստ» (տնօրեն՝ Խաչիկ Վարդանյան) և «Նաիրի աշխարհ» (տնօրեն՝ Հովիկ Օդաջյան) գրախանութները:

Ապրիլի 19-ին Հայաստանի ազգային գրադարանի աշխատակիցները այցելեցին Բերդ համայնքի Չինարի գյուղ՝ հավաքված գրականության նվիրատվության նպատակով: Տեղում ծանոթացան համայնքում ծավալվող մշակութային կյանքին և ընթերցողների պահանջներին: Կարծիքներ փոխանակվեցին նորաստեղծ գրադարանի կազմակերպման վերաբերյալ:

Ազգային գրադարանը իր աջակցությունն ու օգնությունը առաջարկեց սահմանապահ համայնքում նոր գրադարանի ստեղծմանն ու կազմակերպմանը: Չինարի համայնքի գրադարանին Հայաստանի ազգային գրադարանի գրքափոխանակության հավաքածուից շարունակաբար կտրամադրվի մեծաքանակ գրականություն:

